

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՑ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ֆետրուար ամսուան ընթացքին, տեղի ունեցաւ մէկ անգամ Միաբան. Ընդի. Ժողով, Ս. Աթոռայ. Յնդի. Ժողովը ինն անգամներ ի նիստ զումարուեցաւ իբրեւ վարական Մարմին, Կոմ. Գեր. Ասեմանը՝ հինգ անգամ, իսկ Ասեմանը. Խորհուրդը՝ մէկ անգամ:

● Կիր. 1 Մարտ. — Ըստ իրական կարգի, երէկ երեկոյ՝ Վերալափառելու ի Ս. Յարութիւն մասը ունենալէ վեր, այս առաւօտ եւ Միաբանութիւնը գնաց նոյն Ս. Տանարը. ուր, հայկական Գողգոթայի վերնայարկ մասուսին մէջ Ս. Գատրաօք մատուցուելէ յետոյ, Ս. Գերեզմանին շուրջը հանդիսաւոր երբողարմ թափօր կատարուեցաւ Ս. Գատրիարք չոր գիշաւորութեան: Որովհետեւ Յայն եւ Լափիքը եւս ունեին թափօր, քարոզի ժամանակ չկցաւ:

● Գր. 3 Մարտ. — Գիշերային շնորհեցէի ժամանակ Ս. Գատրիարքը քառասորդական առաջին բարեգող խոսեցաւ. ընտրանքն էր Շնորհալոյ խօսքը, Վրուխն ստից խոնարհեցաւ, զի զպատուիրան քո մտապաշտ. բացատրեց թէ մեղքը ետեւեւան է հոգեկան կեանքի անսնուարութեան մէջ յառաջ եկած խանգարումին, որով բանականութիւնը զգայալութեանց կամ հոգին մարմինին կը սկսի ծառայել: Իսկ այդպիսի վիճակը մը չենթարկուելու համար, անհրաժեշտ է որ մարդ ի յուշի ունենայ միշտ աստուածային օրէնքը, զոր Ս. Գիրքն ու Եկեղեցին կ'աւանդեն մեզի:

● Ուր. 6 Մարտ. — Ճաշու ժամերգութեան միջոցին Ս. Մկրտիչ Սրբազան քարոզեց կանանց դասուն. պատմելէ վերջ նարարկ կնոջ՝ Արգիշի զիմամը Դաւիթին, որպէսզի լրեւիւրեցի չըբտնօր իր ընտանիքին հանդէպ, բացատրեց թէ կինը ի՞նչ բարեբար դեր կրնայ եւ պարտի կատարել ցաւալի չարիքներու առաջին առնելու համար:

● Եր. 7 Մարտ. — Երկու Ս. Կիւրեղ հայրապետաց տօնին առթիւ, Ս. Գատրաօքը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ Ս. Կիւրեղ տեղանին առջև, որուն վէմամբան է օրբասալ այն աւագանը, որ ըստ աւանդութեան մէկ մասն է այն Մկրտարանին, ուր Ս. Կիւրեղ մկրտեց Նորադարձ հեթանոսներու բազմութիւնը:

● Կիր. 8 Մարտ. — Ըստ աւանդական կարգի, Ս. Գատրաօքը մատուցուեցաւ Ս. Ներսիսկապետաց վանքի եկեղեցւոյն մէջ, ի յընթափակի Ս. Աթոռայ, ուր Տ. Գագի վրդ. աւուրն պատշաճի քարոզը խօսեցաւ. Նիւրին էր Անառակ Որդիին առաջը, զոր վերլուծեց բարոյական խորհրդածութիւններով:

● Գր. 10 Մարտ. — Աւագ Թարգման Տ. Հայրիկ վրդ. եւ զիւսանպետ Գ. Կ. Նուրեան կառավարական պալատնապետէ գացին, միւս աղգաց ներկայացուցիչներուն հետ, խորհրդակցելու համար մասնաւորապէս Ս. Յարութեան Տանարին մէջ լինելիք զատկական տօնակատարութեանց ժամանակացոյցին շուրջ:

— Երեկոյն, Ս. Գատրիարքը քարոզեց Մայր Տանարին մէջ, Եկեղեցի ժաման, Շնորհալոյ Վանձիդ ծածկելոյ գտող զիս արտա բնաբանով, բացատրեց թէ Աստուած անձանք յայ գերաւանցապէս իրական մեծութիւնն է, զոր մարդ կրնայ եւ պարտի դտնելու եւ ճանչնալ խղճի, գիտութեան եւ հասարակ լոյսերով՝ իր անձին բռնութեան եւ Ս. Գրաց յայնանութեանց մէջ. եւ թէ՛ անգամ մը որ դտնէ զայն, պիտի համարուի թէ, ինչպէս Առաքեալը կ'ըսէ (Պող. Բ.), Աստուծոյ խորհուրդը արդարեւ գանձարանն է նշմարիտ իմաստութեան, զի Աստուծոյ մտածումին մէջ են բարոյաները պիտի բոլոր բարոյական եւ իմաստաւորական նշմարութիւններուն, զորս պարկեշտ միտքը կ'ընդունի իբրեւ հոգիին կեանքը վարդ մեծ սկզբունքներ:

● Եւ. 12 Մարտ. — Ս. Գատրիարքը, մասնակցութեան Միաբանութեան, այսօր օրհնութիւնը կատարեց իմաստակերէն մեծ զանգագատան, որ պիտի կառուցուի Բեթղեհէմի Ս. Ենքնդեան վանուց հայապատկան բաժնի տանիքին վրայ. պիտի լինի զուտ հայկական տնով ըստ օրինակի էլմիամանի ճարտարապետութեան. պիտի ունենայ հինգ զանգակներ, որոնք հաւատարմը պիտի նկնչուի եկեղեցւոյն հոսանքի ուժով:

— Կէտքէ վերջ Միաբանական Ընդհ. Ժողով զումարուեցաւ:

● Ուր. 13 Մարտ. — Ճաշու ժաման կանանց քարոզ խոսեցաւ Տ. Մկրտիչ Սրբազան. պատմելով Յովպէի Այծեմիկ կնոջ՝ Երաթիւնը, ըստ Գործք Առաքելոցի. բացատրեց թէ Բրքան իբրեւ կարող կրնայ լինիլ կնոյ գերը քրիստոնէական բարեգործնոյ մասը մարդին մէջ, եւ թէ մարդկութիւնը ի՞նչ թանկան կանանքը կը պարտի կնոյ արտին եւ հաւատքին:

● Եր. 14 Մարտ. — Ուխտաւորաց հոգեւոր միութարութեան համար, աւանդական ուղիքով ինչ է Մեծ Գահաց լիւրջին կիրակիներէն միայն եկեղեցական պաշտամունքը կատարել շամբարման լերան օրբայութիւն վրայ: Ըստ այդմ, Միաբանութեան մէջ մտող այս երեկոյն զանց նոյն բարձունքը, ուր կատարուեցաւ նախ երեկոյնան ե յետոյ գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւն, ապա Ս. Գատրաօք. կէտ գիշերին անէնքը դարձան վանք:

● Կիր. 15 Մարտ. — Ս. Գատրիարք չոր հանգիստպետութեան Միաբանութիւնը Վերալափառելու թափօր կատարեց շամբարման Սարին վրայ. ապա հանդիսաւոր Ս. Գատրաօք մատուցուեցաւ տաղաւարի ներքև, ի ներկայութեան Ժողովուրդի մեծ բազմութեան: Ըստ պատշաճի աւուրն քարոզեց Տ. Միւսան վրդ., որ նիւթ

առնելով Տնտեսին Առաջին, հանգամանորեն բացատրելով թե՛ դրամը կամ հարստությունը որ ընդհանրապես կենցիկի ամենին կարևոր ազդակներն են մին է, պետք է լինի ոչ թե նպատակ այլ միջոց միայն, լինելու համար բարի ոչ մի՛ բարոյական նպատակներու իրադրոժման:

— Ս. Գառիբարձը, կես օրին, ընկերակցութեամբ Տ. Կիրիզի վրդ.ի, այցելելով իրանի խաչատուրանը, ի շնորհաբարութիւն վեհ. Շահին Ծննդեան Տարեգարմին:

● Գշ. 17 Մարտ. — Եկեղեցիի ժամուն, Ս. Գառիբարձը Շնորհալույս Վրդ եղէ մեղացի, դատող կործանեան, գուր ինձ փորցից՝ առաջին վրայ խոսեցաւ քարոզ մը, հրատարակուած՝ Սիմիի այս թիւին մէջ:

● Գշ. 18 Մարտ. — Ս. Գառիբարձը, Տ. Մեհաբաղ Սրբազանի և Տ. Շնորհ և Տ. Արթուր Արեղանեան ընկերակցութեամբ այսօր այցելելով Յոպպէ, և զարմաւ երեկոյեան դէմ:

● Ա. 20 Մարտ. — Զաչու ժամուն, Տ. Մկրտիչ Սրբազան քարոզեց կանանց դատուն. ներքին էր Ռեյմանիոյ Սիման բողոքի տուն մէջ՝ կնոջ մը կողմէ Թիւոսի ընծայուած օժտմի մեծարանքը, որուն առթիւ շնորհեց կնոջ պարտականութեան մասին՝ կրօնական և եկեղեցական բարեպաշտութեան տեսակէտով:

● Եր. 21 Մարտ. — Վաղուան Դատարարի Կիրակիի առթիւ, ըստ իրաւական սովորութեան, Ս. Գառիբարձը չոր գլխաւորութեամբ Վերալափառելի մուտք կատարուեցաւ ի Ս. Յարութիւն: Յետ երկրպագութեան առաջի Ս. Գերեզմանին, Կիրակամատի ժամերգութիւնը կատարուեցաւ հայապատկան Ս. Լուսաւորիչ հինաւուրց եկեղեցիին մէջ:

● Կիր. 22 Մարտ. — Գլխաւորութեամբ Ս. Գառիբարձը չոր, գլխաւորութեան և առաջնեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյի մէջ: Յետոյ, ըստ աւանդական սովորութեան, Ս. Գառիբարձը հանդիսի պատարագից Գրիտոսի Ս. Գերեզմանին վրայ, և քարոզեց բնաբան առնելով Շնորհալույս Վրդի միտ մերձ ծանիր՝ Գուն մահու եկեալ՝ Գնիտող դատարար: Գոյց տուաւ մահուան մտածումին ազդեցութիւնը կեանքին վրայ, ընդհանուր առմամբ չի՛ք նկատեց այն երկրորդ թէ՛ ամահուան միջոցաւ էր բարոյականը մտած: Ե աշխարհ: Բացառելով թէ այն մտածումը թէ՛ ամեն կայ և արդարութիւն կայ ի վերջոյ՝ լուրջ է՛ զան մարդը, կը թելադրէ բարի կեանք մը ապրել, կ'օգնէ՝ տիրանալու համար չլծարիտ իմաստութեան, ցոյց կուտայ թէ որքան կարճ է կեանքը՝ համեմատութեամբ փա-

տարուելիք պարտականութեանց, և թէ լայնախառն և ներքոյ կ'ընէ զմեզ, յարգորհելով որ պղտիկ կիրքերով չլինելուց մեր հոգին: — Ս. Գառիբարձի աւարտումին, կատարուեցաւ երազարժ թափօր՝ Ս. Գերեզմանին շուրջը:

● Գշ. 24 Մարտ. — Եկեղեցիի ժամուն՝ քարոզեց Ս. Գառիբարձը. Շնորհալույս մէջ բուն հոգիի մարդը մասնանշելի և անոր կրօնական ըրնարին և աղօթական խելամներուն արժէքը վեր հանելով վերջ, խոսեցաւ ճշմարտով խոստովանելիքի վրայ, բացատրութիւններ տալով աւարտ քրական և հոգեւոր զեղեցիկութիւններուն, ընդհանուր կազմութեան և ներքին իմաստունութեան վրայ. ապա ի մասնաւորի կանգ առաւ Վարդի անմահութեան տունի վրայ զմեզ անձին իմայ յառաջ թաւ զեղանին իմ յաշխարհէն մասնումին առկա, և շնորհեց Բարդուին ինքնաշխարհ տքնութեամբ. նշմարիտ ապաշխարութեամբ և իր ձեռքով կատարուած բարեգործութեամբ իր կենդանութեան առնին իսկ իր փրկութիւնը շահելու և խաղաղ մահով իր կեանքը կնքելու սկզբունքին ջրիտանեական մեծութեան վրայ:

● Ա. 27 Մարտ. — Զաչու ժամուն Տ. Մկրտիչ Սրբազան քարոզեց կանանց դատուն. բնաբան էր, «կին դու մեծ ես հաւատք քո», բացատրելով թէ կնոջական քրոյ հաւատքը ինչ բարեբար արդիւնքներու աղբիւր կրնայ լինի քրիստոնեական կեանքի մէջ:

● Ա. 27 Մարտ. — Տ. Մեսրոպ Սրբազան, որ երկու օր առաջ չայցաւ դաքսի էր զօրծով, դարձաւ այսօր:

● Եր. 28 Մարտ. — Վաղուան ի վիրապչի տունի առթիւ. Ս. Գառիբարձը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ Ս. Լուսաւորի խորանին առջև: Վաղուանքի առնին հարնուելով թափօրով Աւարտ քրական հանաւեցաւ, ապա Ս. Գլխաւորի բերուեցաւ Լուսաւորի մատունքը պարունակող խաչը, զոր ի ձեռքին առնէր Ս. Գառիբարձը. ապա Միաբանութիւն և աշակերտք՝ Աւարտ քրական առկա և ժողովուրդը Գլխաւորի տեղանին վրայ խոնարհեցան ի համար շուրհական Նշխարաց:

● Կիր. 29 Մարտ. — Ս. Գառիբարձը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորի պատկան. քարոզեց Տ. Կիրակի վրդ. ըստ աւանդական պատշաճի՝ խոսեցաւ Գրիտոսի գալուտեան, ի մասնաւորի՝ երկրորդ գալուտեան մասին: Ահաբանական ցոյցմութեանը մտեցաւ անոր երբ և ինչպէս լինելու հարցերուն, և ի վերջոյ անոր նպատակին՝ այսինքն հատուցման և արդարութեան ջրիտանեական սկզբունքին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hayrik Aslanian, Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.